Հաստատում եմ՝

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի

Գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

16 փետրվարի 2023թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող **Գոռ Էդվարդի Պետրոսյանի** «Պատժամիջոցների դերը գլոբալ և տարածաշրջանային քաղաքական գործընթացներում» թեմայով ատենախոսությունը պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ վերաբերյալ

Հաստատվել է

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի քաղաքագիտության ամբիոնի 2023թ. փետրվարի 16-ի նիստում: *Նիստին մասնակցում էին քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Փ. Ենգոյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանը, քաղ. գիտ. թեկնածու Ն.Ա. Դունամալյանը, քաղ. գիտ. թեկնածու Ս.Ս. Շիրխանյանը, ավագ դասախոս Մ.Լ. Հարությունյանը, դասախոսներ Ն.Ի.Մարգարյանը, Ի.Ա. Քարամյանը:*

Գոռ Պետրոսյանի «Պատժամիջոցների դերը գլոբալ և տարածաշրջանային քաղաքական գործընթացներում» թեկնածուական ատենախոսությունը գիտագործնական կարևորություն ունեցող և արդիական աշխատանք է: Թեմայի տեսական արդիականությունը հեղինակը պայմանավորում է հետսառըպատերազմյա աշխարհակարգի համատեքստում միջազգային հարաբերությունների սուբյեկտների կողմից պատժամիջոցների կիրառման աճի միտումներով: Վերջին տասնամյակի ընթացքում պատժամիջոցները դարձել են միջազգային

հարաբերություններում քաղաքական կամքի պարտադրման կարևորագույն մեխանիզմներից մեկը, ուստի պատժամիջոցների կիրառման քաղաքական նպատակների, մեխանիզմների, դրանց դիմակայելու գործիքակազմի ուսումնասիրությունը ձեռք է բերել, ըստ հեղինակի, կարևոր տեսական նշանակություն: Բացի գիտական կարևորությունից, գլոբալ և տարածաշրջանային գործընթացներում պատժամիջոցների դերի հետազոտությունն ունի նաև կարևոր կիրառական նշանակություն Հայաստանի համար, որովհետև արդի միջազգային քաղաքական հարաբերություններում պատժամիջոցների հիմնախնդրի ուսումնասիրությունը մի կողմից հնարավորություն է ընձեռում քննարկելու և գնահատելու Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ու Թուրքիայի վարած քաղաքականությունը պատժամիջոցների քաղաքական տրամաբանության համատեքստում, մյուս կողմից՝ դիտարկելու Արևմուտքի կողմից Իրանի ու Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ազդեցությունը ՀՀ տնտեսական և քաղաքական ներուժի վրա:

Հետազոտության շրջանակներում կարևորվում է պատժամիջոցների կիրառման քաղաքական դրդապատճառների և նպատակների տարբերությունների, նրանց արդյունավետության համար անհրաժեշտ փոփոխականների վերլուծությունը: Թեմայի կարևորությունը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կատարելագործման, ազգային անվտանգության ապահովմանն ուղղված գործունեության արդյունավետության համար կիրառական առաջարկություններ մշակելու տեսանկյունից:

Իր առջև դրված հետազոտական խնդիրների իրականացման ընթացքում, հեղինակը կիրառել է որակական և քանակական տարբեր մեթոդներ: Գնահատելի է այն հանգամանքը, որ հեղինակն օգտվել է բազմաթիվ սկզբնաղբյուրներից, վերլուծել վիճակագրական տվյալները: Հեղինակն ատենախոսության առաջին գլխում ձևակերպել է հետազոտության տեսամեթոդական բազան, որը կիրառել է հետազոտության հաջորդ գլուխներում: Հետազոտության երկրորդ գլխում մանրամասն վերլուծության է ենթարկել Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունը: Հետազոտությունն ունի բավարար գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են արտաքին քաղաքականության վերլուծության համար անհրաժեշտ գիտական վերլուծական նյութեր, պետական պաշտոնական այլ կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթեր:

Ատենախոսությունում որպես նորույթ առկա են մոտեցումներ, գաղափարներ, տեսական ընդհանրացումներ և առաջարկություններ: Դրանցից հարկ ենք համարում նշել

միջազգային հարաբերություններում գործածվող պատժամիջոց եզրույթի հայեցակարգային և գործառութային սահմանումը, որով փաստացի ընդգծվում է նշված եզրույթի ուսումնասիրությունների ներառման շրջանակը: Անկախ թեմայի միջգիտաճյուղային բնույթից՝ հեղինակը փորձել է ապացուցել նրա քաղաքական հետազոտության առաջնահերթությունը: Ատենախոսությունում մանրամասն լուսաբանված է պատժամիջոցների իրավական հակասականությունը ու քաղաքական տեսանկյունները: Բավականին հիմնավոր հետազոտվել են Ռուսաստանի նկատմամբ կիրառվող արևմտյան պատժամիջոցները: Հեղինակը կատարել է մի շարք քաղաքական կանխատեսումներ այդ պատժամիջոցների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հետևանքների մասին գլոբալ քաղաքական գործընթացներում: Առանձնացվել են նաև այն փոփոխականներն ու գործոնները, որոնց պայմաններում պատժամիջոցների կիրառումը կարող է լինել արդյունավետ:

Ատենախոսությունում առկա է էմպիրիկ ուսումնասիրության արդյունքների զուգորդում սեփական վերլուծության հետ: Ատենախոսը ներկայացրել է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Իրանի ու Վրաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցներով պայմանավորված տարածաշրջանային ուժային հավասարակշռության վերափոխման միտումները:

Հետազոտության գիտական նորույթը ձևակերպված է առանձին դրույթներով, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Ատենախոսության եզրահանգումները գիտական են և օգտակար նմանատիպ թեմայի վերլուծության շրջանակներում:

Գոռ Պետրոսյանի ատենախոսությունն զերծ չէ նաև որոշակի թերություններից.

1. Հետազոտության առարկան ձևակերպվում է որպես «Հայաստանի և նրա անվտանգային համակարգի համար ռազմավարական կարևորություն ունեցող պետությունների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների և դրանց ազդեցության ուսումնասիրություն», իսկ ատենախոսության թեման՝ «Պատջամիջոցների դերը գլոբալ և տարածաշրջանային քաղաքական գործընթացներում»: Ակնհայտ է, որ առարկան ավելի նեղ է սահմանվում, քան թեմայի անվանումը: Մեր կարծիքով, դրանք պետք է լինեն նույնական: Հետևաբար, ատենախոսության ձևակերպումը պետք է լիներ ավելի կոնկրետ: Ընդ որում՝ «ուսումնասիրությունը» չի կարող լինել գիտական հետազոտության առարկա:

2. Ատենախոսը դիտարկում է Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի հետ միջպետական սահմանների փակումը, ինչպես նաև Հայաստանի նկատմամբ իրականացվող տրանսպորտային բլոկադան որպես տնտեսական պատժամիջոց: Թեև Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից տվյալ քաղաքականության իրականացումն ունի տնտեսական չափում և էապես ազդում է Հայաստանի մակրոտնտեսական վիճակի ու արտաքին առևտրաշրջանառության կոնյունկտուրայի վրա, սակայն, կարծում ենք, այն սխալ է դիտարկել բացառապես տնտեսական պատժամիջոցների համատեքստում: Թե՛ սահմանների փակումը, թե՛ տրանսպորտային հաղորդակցությունների պարալիզացումն ունեն շատ ավելի խորքային նպատակներ, որոնցից թերևս առանցքայինը Հայաստանի աշխարհաքաղաքական մեկուսացումն է, տարածաշրջանային գործընթացներում դերակատարման նվազեցումը: Ըստ ատենախոսի տրամաբանության, ստացում է, որ ս.թ. հունվարի 1-ից Հայաստանի և Թուրքիայի միջև ավիաբեռնափոխադրումների արգելքի վերացումը Հայաստանի նկատմամբ պատժամիջոցների վերացմանն ուղղված քայլ է: Ի վերջո, եթե անգամ ընդունենք, որ դա տնտեսական պատժամիջոց է, ապա հեղինակը պետք է առնվազն սահմանի դրա տեսակը՝ ընդհանուր, թե՞ սեկտորալ: Չէ որ ի հեճուկս այդ ՝՝պատժամիջոցների՝՝ Հայաստանն ու Թուրքիան շարունակում են առևտրաշրջանառություն իրականացնել:

3. Ատենախոսը գրում է, որ «սույն աշխատանքը հայ քաղաքագիտական շրջանակներում առաջին հետազոտությունն է, որը հանալիր և համընդգրկուն կերպով անդրադառնում է պատժամիջոցների թեմային քաղաքագիտական տեսանկյունից» (էջ 13): Նախ՝ միջազգային տնտեսական պատժամիջոցներին նվիրված ուսումնասիրությունների գերակշռող մասն ունի միջգիտակարգային բնույթ, ինչը երևում է նաև ատենախոսության «Գիտական մշակվածություն» բաժնից: Այն, որ Հայաստանում տնտեսական պատժամիջոցների մասին գրում են առավելապես տնտեսագետները, չի նշանակում, որ նրանք անտեսում են խնդրի քաղաքագիտական չափումը: Դա հնարավոր չէ ապրիորի: Նույն էլ հակառակը՝ պատժամիջոցների ուսումնասիրումն առանց տնտեսագիտական չափման կլինի ոչ լիարժեք ու գիտական առումով խիստ կասկածելի: Ուստի, խնդրի «քաղաքագիտականացումը» կրում է ինքնանպատակային բնույթ ու չի նպաստում դրա խորքային ուսումնասիրմանը:

4. Ատենախոսը պնդում է, որ Թուրքիան ու Ադրբեջանը խուսափում են առևտրային ճանապարհով Հայաստանում ազդեցություն ձեռք բերելու նպատակից, քանի որ

«Հայաստանը ԵԱՏՄ անդամ պետություն է, իսկ Թուրքիան ԵՄ ասոցացված անդամ է, ուստի՝ չի կարող իրականացնել ազատ առևտուր, և Հայաստանը կարող է ստեղծել արդյունավետ գործիքներ զսպելու թուրքական կապիտալի և ապրանքների ներհոսքը Հայաստան» (էջ 124): Պնդումը խիստ վիճելի է, քանի որ անգամ փակ սահմանների պայմաններում հայ-թուրքական առևտրաշրջանառությունը 1995-2020 թթ. կազմել է շուրջ 3 մլրդ ԱՄՆ դոլար, որից մոտ 50 մլն կազմել է Հայաստանից Թուրքիա արտահանումը: Ընդ որում, էապես աճել է թուրքական ապրանքների ներկրումը հատկապես 2019 թ.՝ հասնելով մոտ 260 մլն ԱՄՆ դոլարի: Հայտնի է նաև, որ Թուրքիան հանդիսանում է առանց բացառության ԵԱՏՄ մնացած բոլոր անդամ-պետությունների կարևոր առևտրային գործընկերը: Ուստի, ԵՄ հետ ասոցացումը երբևէ չի խոչընդոտել Անկարային առևտրային կապեր զարգացնել ԵԱՏՄ անդամների հետ:

5. Ատենախոսը բերված եզրակացություններից մեկում նշում է, որ «Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման և դրանց հակաքայլերի հետևանքով ԵՄ-ն հայտնվել է էներգետիկ ճգաժամի առջև, որի պայմաններում ադրբեջանական էներգակիրներն առավել քան երբևէ կարևոր են դառնում ԵՄ համար» (էջ 161): Մի կողմ դնելով այն, որ տվյալ պնդումը չի կարող հավակնել գիտական հետազոտության եզրակացություն լինելուն, փաստենք, որ այն մեծ հաշվով տեղավորվում է ադրբեջանական պաշտոնական խոսույթի տրամաբանության մեջ: Մինչդեռ հայտնի է, որ 2022 թ. Ադրբեջանը ԵՄ է արտահանել ընդամենը 11 մլրդ խմ բնական գազ, իսկ 2023 թ.-ին պատրաստվում է հասցնել այդ ծավալը 12-12,5 մլրդ խմ-ի: Մինչդեռ եվրոպական շուկայում տարեկան սպառումը կազմում է մոտ 400 մլրդ: Լավագույն դեպքում 2027 թ.-ից հետո ադրբեջանական գազի արտահանումը եվրոպական շուկա կարող է հասնել 20 մլրդ խմ-ի: Նշված թվերը վկայում են այն մասին, որ Բաքվի կողմից տարածվող այն թեզը, որ Ադրբեջանից իրականացվող մատակարարումները կարող են փրկել ԵՄ-ն էներգետիկ ճգնաժամից, խիստ չափազանցեցված են: Ռուսական գազի ներկրման ծավալների կրճատման հետևանքով ԵՄ-ում գնալով աճում է հեղուկացված գազի կշիռը, որն առավելապես ներկրվում է ԱՄՆ-ից, Կատարից ու Ալժիրից:

6. Գրականության ցանկում նշվում է հղման էջը, մինչդեռ անհրաժեշտ է տալ ընդհանուր էջերի քանակը: Նաև առկա են հղումներ Յութուբյան ալիքների վրա, ինչը հակասում է ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:

ՀՌՀ քաղաքագիտության ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է որ, այս թերությունները չեն գցում ատենախոսության գիտական արժեքը և *Գոռ Էդվարդի Պետրոսյանի* **«Պատժամիջոցների դերը գլոբալ և տարածաշրջանային քաղաքական գործընթացներում»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է **ԻԳ.00.02, Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ մասնագիտությամբ** քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ /Հ. Լ. Սարգսյան/

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանի
ստորագրությունը հաստատում եմ
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Կասաբաբովա